

միջակ եւ փոքր ծաւարով էին՝ որոնց վրայ մանուկները կը դրօսնէին: Ասոնք կը սփռուէին տունէն ներս կամ դուրս՝ դաշտին, պարտէզին կամ գրօսավայրին մէջ, ծառի մը տակ, կամ առուակի մը մօտ: Ասիկա յատուկ չէր միայն փոքրիկներու համար, այլ նաեւ մեծերու: 1211ին Հաղբատի մէջ գրուած Գետաչէնի աւետարանին մանրանկարիչ Մարգարէ, ձեռագրին էջ 15ր, արտաքին լուսանցքին վերեւ կը պատկերացնէ «նոնու տակ փռուած ծոպաւոր գորգ, վրան երկար ու ծայրերը դարձարուն բարձ դրած, ուր նստած է մի պատանի եւ նուագում է սաղի վերայ»<sup>(50)</sup>:

Օտար դրացիներու մօտ ալ գորգը այդպէս գործածուած է: Տիգրոնի մէջ է դարուն Արարացիներուն գրաւումէն առաջ կը յիշուի գոյութիւնը Գարունի Խոսրովի կոչուած, ոսկի եւ արծաթթել, մետաքսառէջ, մարդարտաշար եւ դոհարազարդ գորգ մը՝ որ ամբոստ օրերը պալատին զուարճութեան սրահին մէջ կը փռուէր, ուր զուարճացող Պարսիկ արքունիքին կու տար զեղածիծաղ օրուան մը խաբկանքը: Գորգը՝ զետերով, ծառերով ու ծաղիկներով կը ներկայացնէր դարունը:

Պարտէզներու մէջ զուարճութեանց համար գործածուած գորգերու մասին կը յիշեն օտար ուղեգիրներ իրենց Հայաստանէն անցնելու տակ: 1812ին Ռուսիոյ ղեկավարը Freygan Երեւանէն Պարսկաստան իր ճամբուն վրայ, Երեւանի մօտ Diuli պարտէզին մէջ կը հիւրասիրուի «թարմ եւ զեղեցիկ վարդերով սփռուած գորգի մը վրայ»<sup>(51)</sup>: Անգլիացի John Fuller 1818ին Պուրսա այցելութեան՝ տեղացի հայ վաճառականներու հետ սրսի կ'երթայ, եւ որսէն վերջ անոնք «հրամայեցին իրենց գորգերը սփռել, անոնց վրայ նստած ծխելու եւ սուրճ խմելու համար»<sup>(52)</sup>:

Վաղուց գոյութիւն ունէին աղօթքի գորգեր: 982էն մեղի հասած անանուն Պարսիկ աշխարհագրութիւն մը մեղի կը վկայէ որ Կիլան (Պարսկաստան) «աղօթքի գորգեր» (Prayer-Carpets) կը հիւսէին: Ան կը վկայէ նաեւ որ Հայկական Ատրպատականի «Վարդան. — շատ բարդաւաճ քաղաք մըն է, ուրկէ կու գան զիյլու եւ աղօթելու գորգեր»<sup>(53)</sup>: Վարդան՝ Արաքսի վրայ Արտէպիլէն հիւսիս քաղաք մըն էր, որուն աւերակները ցարդ կը մնան իբր Ալդան: Պէհա էտ-Տին Արար մատենագիրը (1137-1193) իր թողուցած «Սալաէտտինի կեանքը» արժէքաւոր գործին մէջ կը վկայէ որ Հայաստանցի ծագումով այդ Քիւրտը կ'աղօթէր «աղօթքի-գորգի մը վրայ»<sup>(54)</sup>:

Գորգերու գործածութեան համար ազնուականները մասնաւոր սպասաւորներ ունէին: Անտարակոյս ատոր մէկ ահնարկութիւնն է Ղազար

<sup>(50)</sup> Հաղբատի Դպրոցի մի Գլուխ Գործոց: — Գ. Արք. Յովսէփեան, Սիոն, 1931, էջ 206:

<sup>(51)</sup> Letters from the Caucasus and Georgia. — London, 1823, p. 298.

<sup>(52)</sup> Narrative of a tour. — London, 1830, p. 69.

<sup>(53)</sup> Hudud al-Alam. p. 142.

<sup>(54)</sup> The life of Saladin. — London, 1897, p. 13.